ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչությունը հրավիրում է մասնագիտացված միջազգային հասարակական կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչություններին՝ մասնակցելու «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի Կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) համալրման գործընթացին:

Խորհրդին կարող են անդամակցել 18 տարին լրացած, մասնագիտացված միջազգային հասարակական կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների կողմից ներկայացված (յուրաքանչյուր կազմակերպության կողմից մեկ թեկնածու) այն թեկնածուները, ովքեր՝

- ունեն բարձրագույն մասնագիտական՝ կենդանիներին առնչվող կրթություն,
- վայրի կենդանիների խնամքի, նրանց հաջողությամբ բազմացման առնվազն 5 տարվա փորձ,
- կենդանաբանական այգիներում կամ կենդանիների բուծման կենտրոններում աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ:

Խորհրդի կազմում ընդգրկվելու համար թեկնածուն պետք է մինչև 20.05.2021թ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն (հասցե՝ Արգիշտի 1) ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

1. մասնագիտացված միջազգային հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից համապատասխան գրություն՝ ուղղված Երևանի քաղաքապետին,
2. ինքնակենսագրական (CV),
3. անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
4. դիպլոմ(ներ)ի պատճեն(ներ)ը,
5. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթ(եր)ի պատճենները:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել 011-514-197 հեռախոսահամարով կամ գրել mshakuyt@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին: